



GLOBAL SPC
BUSINESS & LEGAL CONSULTING

ԱՐԿ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀՀ ՍՏԱՆՁՆԱԾ
ՊԱՐՏԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ (ԳՆԱՅԱՏՈՒՄ)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	4
1. ՄԱՔՍԵՐԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 1994-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ (ՄԱԳՀ) ՀՀ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	4
2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀՀ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	8
3. ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԵՎ ԲՈՒՄԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ (ՍԲՍ) ՀՀ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	8
4. ԱՌԵՎՏՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ (ԱՏԽ) ՀՀ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	9
5. ԾԱԳՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀՀ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	10
6. ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀՀ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	13
7. ԼՐԱՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՅՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀՀ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	14
8. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀՀ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	15
9. ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀՀ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	17
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻ	17
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	18

ՆԱԽԱԲԱՆ

Հետազոտությունն ամբողջական դարձնելու նպատակով, ի լրումն մրցութային հայտով ՀՀ առևտրատնտեսական օրենքների ուսումնասիրության, Գլոբալ Էս-Փի-Սի-ն իրականացրել է նաև ՀՀ ԱՀԿ անդամակցությամբ ստանձնած և իրավական կարգավորում պահանջող պարտավորությունների իրականացման ուսումնասիրություն:

Ուսումնասիրության երկրորդ մասը անդրադառնում է արդեն հետանդամակցային փուլում ՀՀ ստանձնած պարտավորություններին, որոնք արդեն ներառում են ԱՀԿ ողջ փաթեթը: Թվով շուրջ 39-ը այս պարտավորությունները նախևառաջ արտացոլվել են ԱՀԿ աշխատանքային խմբի զեկույցում, իսկ այնուհետև իրենց պարտավորային ամրագրումն են ստացել ՀՀ անդամակցության արձանագրության մեջ:

Հիմք ընդունելով հենց վերոնշյալ փաստաթուղթը մենք շոշափել ենք այն հիմնական ոլորտները, ուր Հայաստանը պարտավորվել էր փոփոխություններ իրականացնել և նկարագրել ենք արդեն կատարված կամ մոտակա շրջանում կատարվելիք փոփոխությունները: Այստեղ էլ հիմնական շեշտը դրվել է այն օրենսդրական փոփոխությունների և դրանց բուն բովանդակության վրա, որոնք էլ հենց ապահովել են ՀՀ ԱՀԿ նկատմամբ ունեցած պարտավորությունների կատարումը:

1. ՄԱՔՍԵՐԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ԳԼԽԱԿՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 1994-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ (ՄԱԳՀ) ՀՀ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՀԿ-ին անդամակցությամբ Հայաստանի ստանձնած պարտավորությունները վերաբերում են ապրանքների, ծառայությունների և մտավոր սեփականության իրավունքների առևտրի և դրանից բխող ու դրան առնչվող այլ ոլորտների կարգավորումն ապահովող օրենքների ու կանոնակարգերի համապատասխանեցմանը ԱՀԿ պահանջներին՝ ընդհանրապես և ԱՀԿ համաձայնագրերից բխող դրույթներին՝ մասնավորապես: Ընդհանուր առմամբ Հատուկ պարտավորությունների ժամանակացանկերը հավելվածի տեսքով համապատասխանաբար կցված են ՄԱԳՀ 1994-ին և ԾԱԳՀ-ին:

ԱՀԿ-ին անդամակցության գործընթացի շրջանակներում ապրանքների առևտրի և շուկայի մատչելիության պայմանների վերաբերյալ Հայաստանի բանակցություններից բխող պարտավորությունների ժամանակացանկը Հայաստանի անդամակցության մասին արձանագրության Ա Հավելվածն է, որն իր հերթին արտացոլում է Աշխատանքային խմբի զեկույցի եզրակացությունները:

Այսպիսով, եթե համապատասխան բաժիններով անդրադառնանք ԱՀԿ նկատմամբ ՀՀ ստանձնած պարտավորություններին, ապա կստանանք հետևյալ պատկերը.

Ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման մասով օտարերկրյա և տեղական ձեռնարկությունների և անհատների իրավունքները սահմանափակված չեն՝ բացառությամբ ԱՀԿ համաձայնագրերով նախատեսված դեպքերի: Անդամակցության օրվանից Հայաստանը պարտավորվել է, որ ապրանքների առևտրի հետ առնչվող բոլոր օրենքներն ու կանոնակարգերը և այդպիսի իրա-

վունքների նկատմամբ կիրառվող բոլոր վճարները, տուրքերն ու հարկերը գործելու են ԱՅԿ շրջաններում ունեցած իր պարտավորությունների հետ լրիվ համապատասխանությամբ:

«Մաքսատուրքերի մասին» ՀՀ օրենքը համաձայնեցված է ԱՅԿ համապատասխան դրույթների պահանջների հետ: Մաքսային սակագները արտահայտվում են աղվալորային (ապրանքի արժեքի նկատմամբ հաշվարկվող) պայմաններով և գանձվում են հենց սահմանված գներով, բացառությամբ ծխախոտային ապրանքների և վառելիքի, որոնց նկատմամբ կիրառվում է հաստատագրված վճար:

Փաստորեն, դրանց ներմուծումներն արդեն իսկ պարունակում են ԱԱՀ-ն, ակցիզային հարկը և մաքսատուրքերը: Ներմուծված և հայրենական ծագման ապրանքների հաստատագրված վճարների միջև տարբերությունը գտնվում է միասնական սակագների մասով Հայաստանի պարտավորությունների շրջանակներում: Ինչ վերաբերում է ալկոհոլային խմիչքների նկատմամբ կիրառվող մաքսատուրքերին, ապա Հայաստանը պարտավորվել է անդամակցությունից հետո պարբերաբար վերանայել այդ ապրանքների ներմուծման միջին արժեքի վրա դրված հատուկ դրույթները և թույլ տալ դրանց գերազանցումը միասնական դրույթի նկատմամբ:

Հայաստանի ապրանքների ժամանակացանկերում թվարկված են 279 միավոր ապրանքատեսակներ: Ապրանքային կատեգորիաների մեծ մասն ունի նույն դրույթաչափը: Ապրանքների ժամանակացանկում ընդգրկված ապրանքների ավելի քան 60%-ը ենթարկվում են գրոյական, իսկ մնացած 97 տեսակները՝ 10% դրույթաչափով գանձման:

Ներմուծումների նկատմամբ այլ տուրքեր և վճարներ չեն կիրառվում, բացառությամբ սովորական մաքսատուրքերի և մաքսային մարմինների կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարների: Անդամակցությունից հետո ներմուծումների դիմաց գանձվող նման վճարները Հայաստանը պարտավորվել է ներդաշնակեցնել ԱՅԿ դրույթներին: Հայաստանն ընդունել է ՄԱԳՀ II հոդվածը և պարտավորվել է սովորական մաքսատուրքերից տարբեր այլ տուրքերի և վճարների գծով կիրառել միասնական գրոյական դրույթաչափ, ինչպես նաև պարտավորվել է չկիրառել ներմուծման որևէ տեսակի քվոտա:

Մաքսատուրքային բոլոր զիջումները շնորհվում են ԱԱԲ սկզբունքի հիման վրա, բացառությամբ ազատ առևտրային գոտու համաձայնագրերի համատեքստում շնորհվածների:

Օրենքը սահմանում է մաքսատուրքային զիջումներ հետևյալ դեպքերում.

- օտարերկրյա ներդրողների կողմից ներմուծված կապիտալ ակտիվներ, որոնք նախատեսված են համատեղ ձեռնարկությունների կամ օտարերկրյա մասնակցությամբ ձեռնարկությունների կանոնադրական հիմնադրամի համար,
- տարանցիկ ապրանքներ,
- կանոնավոր կերպով որպես ուղևորա- և բեռնատար միջոց ծառայող տրանսպորտ, ինչպես նաև այդ գործողությունների իրականացման համար ժամանակավոր օգտագործման նպատակով ներմուծվող անհրաժեշտ վառելիք, սնունդ, գործիքներ և այլ առարկաներ,
- արտարժույթ, պարտատոմսեր և այլ արժեթղթեր,

- ◉ մարդասիրական օգնություն կամ բարեգործական նպատակներով Հայաստան ներմուծվող ապրանքներ,
- ◉ այնպիսի ապրանքներ, որոնք ժամանակավորապես ներմուծվել են Հայաստան և հետագայում արտահանվել են առանց վերամշակման, ինչպիսիք են ցուցահանդեսների սմուլները, փաթեթները, ժամանակավոր այցելուների մասնագիտական սարքավորումները, գովազդային նյութերը, կենդանիները և այլն,
- ◉ մաքսագերծ խանութներ ներմուծված ապրանքները՝ հետագա արտահանման նպատակով, որպես օտարերկրյա հաճախորդների սեփականություն Հայաստան ներմուծվող ապրանքները, որոնք պետք է այստեղ վերամշակվեն և արտահանվեն,
- ◉ միջազգային համաձայնագրերով նախատեսված ցանկացած ապրանքատեսակներ:

Ինչ վերաբերում է Հայաստանի կողմից ներմուծումների վրա դրված ադվալորային մաքսային վճարներին, ապա դրանք ևս համապատասխանում են ԱՀԿ դրույթներին՝մասնավորապես ՄԱԳՀ 1994-ի VIII հոդվածի պահանջներին:

Հայաստանից ցանկացած ուղղությամբ արտահանումը հարկվում է զրոյական դրույթով, իսկ դեպի Հայաստան բոլոր ներմուծումների նկատմամբ կիրառվում է ստանդարտ դրույթ: Հայաստանը ներմուծումների նկատմամբ ԱԱՀ կիրառման առումով որդեգրել է ԱԲԱ կանոնը, այսինքն՝ ԱԱՀ-ի մասով և՛ հայրենական, և՛ ներմուծվող ապրանքների նկատմամբ սահմանված է 20% դրույթաչափ: Այն հաշվարկվում է մաքսային մարմինների կողմից և գանձվում է՝ անկախ արտահանող երկրից: Բոլոր ներմուծված ապրանքների համար (բացառությամբ այն ապրանքների, որոնց նկատմամբ կիրառվում է զրոյական մաքսատուրք և որոնք ակցիզային հարկով ԱԱՀ հարկման առարկա են) մաքսային մարմինների կողմից գանձվում է ներմուծման պահին՝ անկախ ծագման երկրից¹:

ԱԱՀ-ից ազատված ապրանքատեսակներն են միջնակարգ կրթությունը, դպրոցահասակների համար տետրերն ու հուշատետրերը, անասնաբուժական դեղորայքի վաճառքը, արտադրողի կողմից գյուղմթերքի հայրենական արտադրանքի վաճառքը², թռչանների սպասարկման հետ առնչվող գործառնությունները, որոշ ֆինանսական ծառայություններ և այլն: Ի լրումն դրա, զրոյական հարկ է կիրառվում դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչություններ կամ այլ համարժեք միջազգային, միջկառավարական (միջպետական) կազմակերպությունների կողմից պաշտոնական օգտագործման համար նախատեսված ապրանքների ներմուծման, ինչպես նաև Հայաստանում այդ կազմակերպությունների կողմից պահանջված ապրանքների ձեռք բերման դեպքում և այլն:

Ագարակատերերի կողմից վաճառվող սեփական արտադրության արտադրանքի և հայրենական անասնաբուժական դեղորայքի վաճառքի ազատումն ԱԱՀ-ից, խտրական վերաբերմունք է նմանատիպ ապրանքների ներմուծումների հանդեպ և հետևաբար, չի համապատասխանում ՄԱԳՀ 1994-ի III հոդվածի դրույթներին, ուստի Հայաստանը պարտավորվել է այդ խտրականությունը վերացնել անդամակցության պահից սկսած: Չնայած պետք է ասել, որ իրականում ագարակատերերի համար ԱԱՀ-ից ազատումը կատարվել է ոչ թե խտրականություն դրսևորելու միտումով, այլ գյուղատնտեսական հատվածին անցումային շրջանում աջակցության նպատակով: Այդուհանդերձ, անդամակցու-

¹ Այս խնդիրը սույն հետազոտությունը գրելու պահին արդեն վերանայման առարկա է:

² 2009թ. գյուղատնտեսությունը, ըստ ՀՀ ստանձնած պարտավորությունների, ԱԱՀ հարկման առարկա է դառնում:

թյունից հետո նման վերաբերմունքը պետք է վերանա, որն իհարկե որոշակի անցումային ադապտացման ժամանակ կպահանջի: Ուստի 2002թ. ընդունված ԱԱՀ-ից ազատման վերացման մասին օրենսդրական ակտը նախատեսում է գործադրել միայն 2009թ-ից: Ընդ որում, այս ընթացքում ԱԱՀ-ից բացառությունների քանակը ոչ միայն չպետք է ավելանա, այլև նվազելու դեպքում չի կարող վերականգնվել: Այս հարցում թափանցիկություն ապահովելու նպատակով Հայաստանը պարտավորվել է Գլխավոր խորհրդին տարեկան տեղեկացնել հարկից բացառությունների կարգավիճակի, քանակի և մակարդակի վերաբերյալ:

Ըստ 2000թ. ուժի մեջ մտած «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի, ակցիզային հարկ է գանձվում ինչպես հայրենական, այնպես էլ ներմուծվող ապրանքատեսակներից: Վերջիններիս հարկը գանձվում է մաքսային, իսկ տեղական արտադրանքից՝ հարկային մարմինների կողմից: Հայաստանում արտադրված ապրանքներից ակցիզային հարկը գանձվում է դրանց շրջանառության կամ վաճառքի հիման վրա՝ ելնելով վաճառքի գներից (առանց ակցիզային և ավելացված արժեքի հարկի): Հարկատուները պարտավոր են հայրենական արտադրության ապրանքների համար վճարել ակցիզային հարկ մինչև ապրանքների վաճառքին հաջորդող ամսվա 15-ը: Հայաստան ներմուծվող ապրանքների համար ակցիզային հարկի գանձումը կատարվում է մաքսային արժեքի նկատմամբ (առանց, ավելացված արժեքի հարկի և մաքսատուրքի) և ներմուծմանը հաջորդող 10 օրվա ընթացքում: Որպես անդամակցության պարտավորությունների մի մաս Հայաստանը հավասարեցրել է հայրենական ապրանքների և նման կամ նույն ապրանքների ներմուծումների նկատմամբ գանձվող ակցիզային հարկերը:

Անդամակցությունից հետո Հայաստանը պարտավորվել է իր ներքին հարկերը՝ ներառյալ ավելացված արժեքի և ակցիզային հարկերը, կիրառել ՄԱԳՀ 1994-ի I և III հոդվածներին համապատասխան՝ հետևելով ոչ խտրականության սկզբունքին՝ բացառությամբ սեփական արտադրության գյուղմթերքների, որոնց դեպքում, ինչպես արդեն նշվել է, նախատեսվում էր անցումային ժամանակաշրջան: Այսինքն, ԱԱՀ և Ակցիզային հարկի մասին օրենքների համաձայն, այդ հարկերը կիրառվում են հայրենական և ներմուծված ապրանքների նկատմամբ հավասար դրույթաչափերով, և Հայաստանը բոլոր աղբյուրներից ներմուծումների նկատմամբ կիրառում է նշանակման վայրի սկզբունքը՝ առավելություն չտալով ծագման երկրի սկզբունքին:

2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՍՆԱԶՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունը, համաձայն ԱՀԿ համապատասխան համաձայնագրի, գյուղատնտեսական ապրանքների արտահանման գծով չի տրամադրում արտահանման լրավճար: Ինչևէ, Նույնիսկ եթե դրանք կիրառվեին, ապա համաձայն Գյուղատնտեսության մասին համաձայնագրի պահանջների դրանք պետք է նվազեցվեին մինչև գրոյական մակարդակը՝ հիմնվելով ապրանքների վերաբերյալ արտոնությունների ժամանակացանկի վրա:

Ինչ վերաբերում է ներքին շուկայի օժանդակությանը, ապա ներկայումս ագարակատերերը ազատված են ավելացված արժեքի հարկ վճարելուց: Սա հանդիսանում է նման տեղական արտադրանքի համեմատությամբ ներմուծումների նկատմամբ խտրական մոտեցման կիրառում և հետևաբար անհամատեղելի է ՄԱԳՀ Համաձայնագրի դրույթների հետ: Այս առումով ՀՀ կառավարությունը պարտավորվել է վերանայել այս հարցը և ագարակատերերի նկատմամբ ԱՀՀ կիրառել՝ սկսած 2009թ. հունվարի մեկից: Այս ժամանակահատվածի ընթացքում հարկից ազատված ապրանքների շրջանակը չպետք է ընդլայնվի:

Այս ոլորտին առնչվող գործընթացի թափանցիկությունը ապահովելու նպատակով ՀՀ-ն պարտավորվել է յուրաքանչյուր տարի ԱՀԿ Գլխավոր խորհրդին ծանուցել Հայաստանում այդ հարկից ազատման ընթացակարգի, դրա շրջանակների և մակարդակի վերաբերյալ զարգացումների մասին: Անհրաժեշտության դեպքում Հայաստանը կխորհրդակցի ԱՀԿ Անդամների հետ՝ ԱՀՀ-ից ազատման կարգավիճակի և նրանց առևտրի վրա դրա ազդեցության կապակցությամբ:

3. ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԵՎ ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ (ՄԲՍ) ՀԱՍՆԱԶՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սանիտարական և բուսասանիտարական միջոցների կիրառման և Առևտրի տեխնիկական խոչընդոտների մասին համաձայնագրերի նման լինելու պատճառով՝ համանման են նաև դրանց վերաբերող բանակցությունների պատմությունը և ստանձնված պարտավորությունները, իսկ Առևտրի տեխնիկական խոչընդոտների մասին համաձայնագրին վերաբերող մի շարք օրենքներ ուղղակիորեն առնչվում են նաև Սանիտարական և բուսասանիտարական միջոցների կիրառման մասին համաձայնագրին:

Սանիտարական և բուսասանիտարական միջոցներին վերաբերող հիմնական բանակցային թեմաներն ընդգրկում էին սանիտարական և բուսասանիտարական միջոցների մշակումը, ընդունումը և կիրառումը, խտրականության բացառումը, սանիտարական և բուսասանիտարական միջոցներ մշակելիս միջազգային համօրինակների որպես հիմք ընդունումը և այլն:

Պահանջների համապատասխանության ապահովմանն ուղղված բարեփոխումների շրջանակներում 1999–2000թթ. ընդունվեցին մի շարք կարևոր օրենքներ և որոշումներ, որոնցից են Անասաբու-ժության մասին, Բույսերի պաշտպանության և բույսերի կարանտինի մասին և Սննդամթերքի անվտանգության մասին օրենքները: Նշված օրենքներում և որոշումներում շտկվեցին նախկինում վիճե-լի կետերը: Բոլոր այդ փաստաթղթերն այժմ համահունչ են Սանիտարական և բուսասանիտարական միջոցների կիրառման մասին համաձայնագրի հետ:

4. ԱՌԵՎՏՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ (ԱՏԽ) ՀՀ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մինչ 1999թ-ին ԱՅԿ-ին անդամակցելուն միտված բանակցությունների աշխուժացումը, Հայաստա-նում շարունակում էին կիրառվել խորհրդային համակարգից մնացած պարտադիր համօրինակները՝ ԳՈՍՏ-երը: Ընդհանրապես համօրինականացման և համապատասխանության հավաստման Հայաս-տանի համակարգը ժառանգել էր խորհրդային համակարգի հատկանիշները՝ պարտադիր և խրթին համօրինակների կիրառմամբ:

Հայաստանում համօրինականացման և տեխնիկական կանոնակարգերի վերահսկմամբ զբաղվում էին ՀՀ Առևտրի և տնտեսական զարգացման նախարարության համապատասխան ստորաբաժա-նումները ստանդարտացման, չափագիտության և հավաստագրման վարչությունը, որոնց պարտա-կանությունների մեջ ընդգրկված էին ստանդարտացման ու հավաստագրման ազգային համակարգե-րի ստեղծումն ու վարումը, ստանդարտացման ու հավաստագրման ոլորտներում քաղաքականության մշակումը և իրականացումը, ազգային ստանդարտների և դասակարգիչների ընդունումը, միջազ-գային ստանդարտների օգտագործումը, հավաստագրման հարցերով բողոքների ու վեճերի վարույ-թը և այլն:

Արդարության համար պետք է նշել, որ մինչ ԱՅԿ-ին անդամակցելը Հայաստանում պարտադիր հա-վաստագրման ենթակա արտադրանքների ցանկը չափազանց մեծ էր, հստակ բաժանում չկար կա-մավոր և պարտադիր ստանդարտացման միջև, իսկ այդ ամենը, իր հերթին խոչընդոտում էր ինչպես ներմուծմանը, այնպես էլ արտադրության կազմակերպմանը՝ երկրի ներսում:

Անդամակցությանը նախորդող բանակցությունների ընթացքում շտկվեցին խնդրահարույց կետերը, որոնք հիմնականում չէին համապատասխանում շուկայական տնտեսության կարիքներին: Դրանք բազմաթիվ էին՝ պարտադիր համօրինակների (ԳՈՍՏ-երի) կիրառումը, կամավոր և պարտադիր հա-մօրինակների տարանջատումը, ապրանքների և ծառայությունների համապատասխանության պար-տադիր հավաստագրման ընթացակարգերի նորմատիվ պահանջների խրթին լինելը, պարտադիր հավաստագրմանը ենթակա արտադրանքների ցանկի կրճատումը, խտրականության բացառումը և այլն:

Մասնավորապես պահանջվում էր կիրառել համօրինակներ՝ միայն առողջապահական, անվտանգու-թյան ու շրջակա միջավայրի պաշտպանության նպատակներից ելնելով: Այսինքն՝ անդամ երկրներն ամբողջովին պետք է հիմնվեն Առևտրի տեխնիկական խոչընդոտների մասին համաձայնագրի, ինչ-

պես նաև ԱՅԿ անդամակցության առանցքային դրույթների վրա, ինչպիսին է օրինակ, ԱԱԲ մոտեցումը:

ԱՅԿ-ի պահանջներին համապատասխանության ապահովմանն ուղղված բարեփոխումների շրջանակներում 1999–2000թթ.-ին ընդունվեցին մի շարք կարևոր օրենքներ և որոշումներ, որոնցից են Ստանդարտացման մասին օրենքը, Համապատասխանության հավաստման մասին օրենքը, Տեխնիկական կանոնակարգերի մասին կառավարության որոշումը և մի քանի այլ հարակից օրենքներ (տես Սանիտարական և բուսասանիտարական միջոցառումներ): Իսկ 2002թ.-ին Հայաստանի կառավարությունում կատարված կառուցվածքային փոփոխություններից հետո Ստանդարտացման, չափագիտության և հավաստագրման վարչությունը վերափոխվեց ՀՀ Առևտրի և տնտեսական զարգացման նախարարության ներքո Հայաստանի որակի տեսչության:

Վերը նշված օրենքներում և որոշումներում շտկվեցին նախկինում խնդրահարույց կետերը և համապատասխանեցվեցին ԱՏԽ համաձայնագրի հիմնային դրույթների հետ:

Օրինակ՝ Ստանդարտացման մասին օրենքում տարանջատում կատարվեց կամովին ստանդարտների և պարտադիր տեխնիկական կանոնակարգերի միջև: Համապատասխանության հավաստման մասին օրենքն իր հերթին կարգավորում է համապատասխանության կամավոր ու պարտադիր հավաստումների հետ կապված խնդիրները: Տեխնիկական կանոնակարգերի մասին կառավարության որոշումը կարգավորում է տեղական ու օտարերկրյա ծագման արտադրանքների ոչ խտրական մոտեցման և օտարերկրյա կանոնակարգերի հավասարության գործառույթը: Բոլոր այդ փաստաթղթերը համահունչ են ԱՏԽ համաձայնագրին, որի հիմնական նպատակներից է առևտրի անհիմն խոչընդոտների վերացումը պարտադիր տեխնիկական կանոնակարգերի և նրանց ընթացակարգերի պահանջների կարգավորման ու նվազեցման միջոցով: ԱՅԿ համաձայնագրի մեխանիզմներին համաձայն՝ հայկական ընկերությունները արտասահմանյան շուկաներում կարող են ակնկալել համանման մոտեցում:

5. ԾԱԳՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀՀ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում կիրառվող ծագման կանոնները համապատասխանում են ԱՅԿ Ծագման կանոնների մասին համաձայնագրում սահմանված սկզբունքներին, այն է ապրանքի ծագման երկիր է հանդիսանում այն երկիրը, որտեղ այն ամբողջությամբ արտադրվել է կամ վերջին անգամ ենթարկվել է բավարար վերամշակման: Ծագումը որոշելու եղանակի ընտրությունը կախված է դիտարկվող ապրանքներից և համապատասխան միջազգային պայմանագրերից: Այնուամենայնիվ, բացառությամբ մեկ երկրում ամբողջությամբ ծագող ապրանքների, օգտագործվում է ապրանքային խմբի փոփոխության չափանիշը (ԱՏՊՍԱ 4-նիշանի մակարդակ, եթե չի նախատեսված այլընտրանքային եղանակ): Համաձայն կառավարության 1993թ. դեկտեմբերի 6-ի որոշմանը կից ծագման երկիրը որոշելու ընթացակարգի, որպես ծագման երկիր է դիտվում այն երկիրը, որտեղ ապրանքը ամբողջությամբ պատրաստվել է կամ որտեղ այն ենթարկվել է բավարար վերամշակման:

ՀՀ Մաքսային օրենսգիրքը ընդգրկում է ծագման կանոնների դաշտը կանոնակարգող ԱՅԿ համաձայնագրի համապատասխան դրույթներ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Մաքսային օրենսգրքի Հոդված 160-ի, հետևյալ ապրանքները պետք է համարվեն որպես մեկ երկրում ամբողջությամբ ձեռք բերված ապրանքներ՝

- ա) կենդանի կենդանիներ, որոնք ծնվել և աճեցվել են այդ երկրում,
- բ) կենդանիներ, որոնք ձեռք են բերվել տվյալ երկրում որսորդության, թակարդելու, ձկնորսության (տվյալ երկրի տարածքային և ներքին ջրերում) կամ համանման այլ գործողության հետևանքով,
- գ) կենդանի կենդանիներից տվյալ երկրում ստացված ապրանքները,
- դ) տվյալ երկրում աճեցված, հնձված, քաղված կամ հավաքված բույսերը կամ բուսամթերքը,
- ե) տվյալ երկրի տարածքից, ընդերքից կամ տարածքային և ներքին ջրերի հատակից ստացված, արդյունահանված օգտակար հանածոները և այլ բնական պաշարները, որոնք ընդգրկված չեն սույն կետից բացառություններում,
- զ) տվյալ երկրում արտադրության, վերամշակման կամ սպառման հետևանք հանդիսացող մնացորդները և երկրորդային հումքը, որոնք պիտանի չեն կամ պիտանի են միայն որպես հումք,
- է) տվյալ պետության դրոշն օրինականորեն կրող նավերով չեզոք ջրերում ձկնորսությամբ ձեռք բերված արտադրանքը,
- ը) սույն կետի «է» կետի ենթակետում նշված ապրանքներից տվյալ պետության դրոշն օրինականորեն կրող նավ-գործարաններում պատրաստված արտադրանքը,
- թ) տվյալ երկրին պատկանող կամ վերջինիս կողմից վարձակալված տիեզերանավերում թռիչքի ընթացքում ստացված արտադրանքը,
- ժ) տվյալ երկրում սույն կետի «ա»-«թ» ենթակետերում նշված արտադրանքից ստացված կամ արտադրված ապրանքները:

Համաձայն Մաքսային օրենսգրքի Հոդված 161-ի, երբ ապրանքի արտադրության մեջ դիտարկվում են մեկից ավելի երկրներ, ապրանքի ծագման երկիր կհամարվի վերջին երկիրը, որտեղ ապրանքը ենթարկվել է էական վերամշակման:

Էական վերամշակման չափանիշները որոշվում են հետևյալ կերպ.

- ա) մշակման գործողություններ, որոնք բերում են ապրանքի ապրանքային ծածկագրի առաջին չորս նիշերից ցանկացածի փոփոխությանը,
- բ) տվյալ ապրանքի արտադրության մեջ օգտագործվող տվյալ երկրի ծագում ունեցող նյութերի արժեքի և ավելացված արժեքի տոկոսային բաժինը կազմում է արտադրանքի բացթողման (մատակարարման) գնի ամենաքիչը 30%-ը, ընդ որում այդ գնի մեջ հաշվի չեն առնվում անուղղակի հարկերը, առևտրային վերադիրները, տրանսպորտային, ապահովագրման, պահպանման և համանման այլ ծախսերը:

Այն ապրանքների դեպքում, որոնք դասակարգված են որպես կոմպլեկտներ (կոմպլեկտավորված ապրանքներ) կամ դիտվում են որպես այդպիսիք, Մաքսային օրենսգրքի Հոդված 162-ի կետ 3-ը նախատեսում է, որ այդ ապրանքների ծագման երկիր է համարվում այն երկիրը, որտեղ կոմպլեկտը հավաքվել է, եթե կոմպլեկտի տվյալ երկրի ծագում չունեցող մասերի ընդհանուր արժեքը չի գերա-

զանցում դրա արժեքի 45%-ը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Մաքսային օրենսգրքի Հոդված 163-ի՝ ապրանքի բավարար վերամշակման չափանիշներ չեն համարվում.

- ա) բացառապես ապրանքների նպատակային նշանակման և վերջնական օգտագործման մեջ կատարվող փոփոխությունները (օրինակ՝ մարդատար մեքենայից բեռնատարի հավաքում և այլն),
- բ) ցանկացած ձևով կատարվող փաթեթավորման գործողությունները (ներառյալ շալցում, փաթեթավորում և այլն),
- գ) ներդաշնակ համակարգի կանոնների համաձայն՝ անավարտ ապրանքներն ավարտուն ապրանքների շարքում դասակարգելը կամ ավարտված, բայց չմոնտաժված արտադրանքը մոնտաժված ապրանքների շարքում դասակարգելը,
- դ) պարզ հավաքման գործողությունները, մասնավորապես՝ մեկ այլ անվանման տակ դասակարգելի ապրանքներ ստանալու համար միավորների խրոցակային միացումը (օրինակ՝ մոնիտորի, ավտոմատ սևուցման միավորի, ստեղնաշարի, մկնիկի միացմամբ համակարգչի ստացում և այլն),
- ե) բացառապես պաշտպանական միջոցների ավելացումը,
- զ) ԱՏԳԱԿ-ի 01 (կենդանի կենդանիներ) ապրանքային խմբում դասակարգված ապրանքներից 02 (միս և մսի ենթամթերք) ապրանքային խմբի ապրանքներ ստանալը,
- է) ապրանքների վաճառման և փոխադրման նախապատրաստական աշխատանքները (խմբաբանակների մասնատում, տեսակավորում, վերափաթեթավորում և այլն),
- ը) արտադրանքի պահպանության, տեղափոխման և պահեստավորման համար անհրաժեշտ գործողությունները,
- թ) ապրանքների վրա կամ դրանց փաթեթավորման վրա նիշերի, պիտակների կամ այլ տարբերակող նշանների ավելացումը,
- ժ) ապրանքների (բաղադրամասերի) խառնման միջոցով այնպիսի արտադրանքի ստացումը, որի բնութագիրն էապես չի տարբերվում ելակետային բաղադրամասերի բնութագրերից
- ի) սույն կետի «ա»-«ժ» ենթակետերում նշված երկու կամ ավելի գործողությունների համակցությունը:

Մաքսային օրենսգրքի Հոդված 162-ը սահմանում է ծագման կանոնների կիրառման հաջորդականությունը:

Իր տեսակետից Մաքսային օրենսգրքով սահմանված ծագման կանոնները չեն հետապնդում ուղղակիորեն կամ անուղղակիորեն որևէ առևտրային նպատակներ, ոչ էլ ստեղծում են խոչընդոտներ ազատ առևտրի համար՝ համաձայն ԱՀԿ պահանջների: Համաձայն Մաքսային օրենսգրքի Հոդված 168-ի՝ ծագման հավաստագրի բացակայությունը ինքնին չի կարող հանդիսանալ միակ պատճառը ապրանքների մուտքը արգելելու համար:

ԱՀԿ Ծագման կանոնների մասին Համաձայնագրի Հոդված 2(ը)-ի և հավելված 11-ի կետ 3(դ)-ի պահանջները արտացոլված են ՀՀ Մաքսային օրենսգրքի Հոդված 167-ի (կետ 2) դրույթներում:

6. ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԼԻՑԵՆԶՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀՅ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունը ներմուծված կամ արտահանված ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ոչ սակագնային կանոնակարգման մասին 1995 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 124 որոշումը կանոնակարգում է Հայաստանի արտահանման ոչ սակագնային միջոցառումները և գործում է որպես արտահանման և ներմուծման լիցենզավորման ոչ ինքնաշխատ ավտոմատ ձև: Ներմուծման թույլտվությունը, որ պահանջվում է Հայաստանում որոշակի ապրանքների ներմուծման համար, հիմնավորված են ԱՀԿ դրույթներով, այսինքն՝ ԱՀԿ Ներմուծման լիցենզավորման ընթացակարգերի մասին համաձայնագրով:

Դեղամիջոցների և որոշ կենդանի (live) կենդանիների ու բույսերի ներմուծման համար համապատասխան իրավասու մարմիններից լիցենզիա է պահանջվում:

Դեղամիջոցների, կենդանի կենդանիների և բույսերի ներմուծման համար լիցենզիան ընդհանուր առմամբ չունի սահմանափակող բնույթ, ավելի շուտ այն նախատեսված է ապահովելու հասարակական առողջությունն ու անվտանգությունը:

Չենքերի, ռազմական տեխնիկայի և դրա պատրաստման համար անհրաժեշտ սպառվող առարկաների, տեխնոլոգիական սարքավորումների և միջուկային նյութերի (ներառյալ՝ էներգակիրների) փնտրող սարքերի, հատուկ ոչ միջուկային նյութերի և դրանց առնչվող ծառայությունների, իոնացնող ճառագայթման աղբյուրների արտահանումը և ներմուծումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տրվող լիցենզիայի միջոցով: Լիցենզիայի պահանջները նպատակաուղղված չեն սահմանափակելու ներմուծումների քանակը կամ արժեքը: Ավելի շուտ, դրանք ուղղված են պաշտպանելու ազգային շահերն ու մարդկանց, կենդանիների և բույսերի կյանքն ու առողջությունը և շրջակա միջավայրը:

Դեղագործական ապրանքների ներմուծման լիցենզիայի ընթացակարգերը նույնն են, ինչ արտահանման լիցենզիայի ընթացակարգերը, և կանոնակարգվում են նույն որոշումներով:

Ներմուծման լիցենզիա ձեռք բերել ցանկացող անձ, ձեռնարկություն կամ կազմակերպություն կարող է դիմել այդ նպատակով, եթե այն գրանցված է Հայաստանի Հանրապետությունում առևտրատնտեսական գործունեություն ծավալող իրավաբանական անձ կամ անհատ ձեռներեց:

7. ԼՐԱՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ՓՈԽՅԱՏՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀՀ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Որպես ԱՀԿ անդամ երկիր՝ Հայաստանը պետք է լիարժեք և հետևողական կիրառի և պահպանի Նշյալ ԱՀԿ համաձայնագրի դրույթները, որոնց թվում են նաև արդյունաբերական ապրանքների համար նախատեսված Լրավճարների և փոխհատուցման միջոցների մասին համաձայնագիրը և գյուղատնտեսական ապրանքների համար նախատեսված Գյուղատնտեսության մասին համաձայնագիրը:

Հայաստանի կառավարությունը չի պահպանում և հետագայում չի կիրառի ԱԱԲ վճարներ, որոնք համապատասխանում են արգելված լրավճարների սահմանմանը: Արտահանմանը նպաստելու միջոցառումները կկիրառվեն համաձայն ԱՀԿ պահանջների:

Հայաստանը, որպես ԱՀԿ անդամ, պարտավորվել է փոխհատուցման միջոցառումները կիրառել ամբողջական համապատասխանությամբ «Լրավճարների և փոխհատուցման միջոցների մասին» համաձայնագրի դրույթներին: «Հակազնազցման և փոխհատուցման միջոցների մասին» ՀՀ օրենքը ամբողջությամբ մշակվել է ԱՀԿ դրույթներին համապատասխան:

Ներկայումս Հայաստանը չի տրամադրում որևէ տեսակի խրախուսման միջոցներ կամ արտահանման լրավճարներ: Արտահանմանը նպաստելու միջոցառումները ներկայումս հիմնականում կապված են համապատասխան ենթակառուցվածքների հիմնման և զարգացման հետ, ինչպիսին է Հայկական զարգացման գործակալությունը, որը կարող է աջակցել գործարար համայնքին՝ այնպիսի ծառայություններ մատուցելով, ինչպիսիք են տոնավաճառների կազմակերպումը, Հայաստանի ներկայացումը միջազգային ասպարեզում, տեղեկատվության տրամադրումը, մարքեթինգային հետազոտությունների իրականացումը և այլն:

8. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ԳԼԽԱԿՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀՅ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանը լրիվ պարտավորություններ է ստանձնել ծառայությունների մատուցման 1-ին, 2-րդ և 3-րդ տեսակների համար, այլ կերպ ասած՝ պարտավորվել է տվյալ եղանակով տվյալ ծառայության օտարերկրյա մատուցման մասով սահմանափակումներ չդնել շուկայի մատչելիության վրա, կամ էլ դեպքից, կախված՝ ազգային մոտեցման վրա հետևյալ ճյուղերում. գործարար ծառայություններ (իրավաբանական, հաշվապահական, և այլն), շինարարական և դրան առնչվող ինժեներական ծառայություններ, բաշխման ծառայություններ, կրթական ծառայություններ, շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահական և սոցիալական ծառայություններ, զբոսաշրջության և հարակից ծառայություններ, մշակութային և սպորտային, փոխադրման ծառայություններ:

1-ին տեսակի համար պարտավորություններ չեն ստանձնվել անշարժ գույքի՝ սեփական կամ վարձակալված գույքի ընդգրկմամբ ծառայությունների և վճարային կամ պայմանագրային հիմունքներով ծառայությունների մասով: Պարտավորություններ չեն ստանձնվել այն պատճառով, որ գործնականորեն հնարավոր չէ ծառայության տվյալ տեսակը մատուցել սահմանը հատող եղանակով:

Ինչ վերաբերում է մենաշնորհների և բացառիկ ծառայություն մատուցողների կարգավորման VII-րդ հոդվածին, ապա Հայաստանը լրիվ պարտավորություններ է ստանձնել ծառայությունների մատուցման 1-ին, 2-րդ և 3-րդ տեսակների համար, փաստաթղթերի տրման ծառայությունների մասով: Լրիվ պարտավորություններ են գրանցված 1-ին, 2-րդ 3-րդ տեսակների համար տեսաձայնային ծառայությունների մասով:

Լրիվ պարտավորություններ են գրանցված 1-ին, 2-րդ և 3-րդ տեսակների համար՝ մասնավոր օգտագործման ցանցերի ծառայությունների, ավելացված արժեքի հեռահաղորդակցության տեղական ծառայությունների, հեռահաղորդակցություններին առնչվող ծառայությունների և վերավաճառքի միջոցով մատուցվող հեռահաղորդակցության ծառայությունների մասով: Տելեքսային և հեռագրային ծառայությունների մասով պարտավորություններ չկան 1-ին տեսակի համար, իսկ 2-րդ և 3-րդ տեսակների համար ստանձնվել են լրիվ պարտավորություններ: Հայաստանը պարտավորվել է այդ շուկային առանց սահմանափակումների մատչելիություն ապահովել մենաշնորհի ժամկետի ավարտին պես կամ դրանից առաջ ցանկացած պահին՝ մենաշնորհը կասեցնելուց կամ վերանայելուց անմիջապես հետո³:

Հայաստանը ԾԱԳՀ-ի ներքո հատուկ պարտավորություններ է ստանձնել ծառայությունների գրեթե բոլոր ոլորտներում՝ բացառությամբ հեռահաղորդակցության և ֆինանսական ծառայությունների, ինչպես նաև որոշ նեղ մասնագիտական ծառայությունների գծով, որոնք ներկայումս մատուցվում են պետության կողմից:

Այսպես, վերլուծելով ԾԱԳՀ-ի ներքո Հայաստանի կողմից ստանձնված հատուկ պարտավորությունները՝ երևան է գալիս, որ այսպես կոչված, հորիզոնական (բոլոր սեկտորներին վերաբերող) պարտավորությունների ցանկում շուկա մուտք գործելու սահմանափակումների բաժնում կան հետևյալ

³ Արմենիայի մենաշնորհի հրաժարումից հետո ՀՀ-ն այն մասով էլ լիովին իրականացրեց իր վրա ստանձնած պարտավորությունները

սահմանափակումները, որոնք վերաբերում են բացառապես ծառայությունների մատուցման 4-րդ տեսակին, այսինքն՝ օտարերկրյա քաղաքացիների ընդունմանը մեկ այլ երկիր այնտեղ ծառայություններ մատուցելու համար:

Օրինակ, արտասահմանյան ընկերությունները, որոնք իրենց աշխատակիցներին ուղարկում են Հայաստանում իրենց կապակցված ընկերությունում աշխատելու, պետք է պատրաստ լինեն տեղեկատվություն տրամադրել վերջիններիս մասնագիտական ունակությունների վերաբերյալ, որից հետո կարող են ստանալ մինչև 3 տարի կացության թույլտվություն՝ երկարաձգելու հնարավորությամբ: Իսկ բուն ընկերությունների ներկայությունը Հայաստանում ենթակա է մասնագիտական որակավորման համապատասխան պետական մարմինների կողմից, որից հետո նրա օտարերկրյա աշխատակիցներին կարող է տրամադրվել մինչև 3 տարի կացության թույլտվություն՝ երկարաձգելու հնարավորությամբ: Այն արտասահմանյան քաղաքացիների համար, որոնք հանդիսանում են օտարերկրյա ընկերությունների աշխատակիցներ և ցանկանում են հիմնել առևտրային ընկերություն կամ պատրաստվում են իրենց ընկերության անունից իրականացնել պայմանագրով նախատեսված գործարք և տրամադրել ծառայություն (որոշակի պայմանների առկայության դեպքում) նախատեսվում է տրամադրել մինչև 3 ամսվա կացության թույլտվություն:

Մի քանի, համեմատաբար ոչ նշանակալի, սահմանափակումներ են գործում գործարար ծառայությունների ոլորտում: Այսպես, օրենսդրության պահանջի համաձայն առևտրային ծառայություն տրամադրող կարող են լինել միայն որոշակի իրավաբանական կարգավիճակ ունեցող ընկերություններ, իսկ տեխնիկական փորձաքննում և վերլուծման ծառայություններ տրամադրող ընկերությունները պետք է ունենան իրավաբանական կարգավիճակ ՀՀ-ում:

Ֆինանսական ծառայությունների ոլորտում սահմանափակումներ են գործում ծառայությունների տրամադրման 3-րդ տեսակի գծով (ծառայությունների մատուցում տվյալ երկրում մեկ այլ երկրի մատուցողի առևտրային ներկայության միջոցով): Այդ սահմանափակումները կարելի է ընդհանրացնել այսպես. բանկային ծառայություններ մատուցողները չեն կարող տրամադրել ապահովագրական ծառայություններ, և հակառակը, ապահովագրական ծառայություններ մատուցողները չեն կարող տրամադրել բանկային ծառայություններ:

Եվս մեկ սահմանափակում, որը չի ներառվում բերված ընդհանրացման մեջ, այն է, որ արժեթղթերի հաշվանցման և պահպանման ծառայություն կարող է տրամադրել միայն Հայաստանի կենտրոնական դեպոզիտորիան: Այդ սահմանափակումները համեմատաբար փոքր են և գործնականորեն սահմանափակող ազդեցություն չեն կարող ունենալ արտասահմանյան ներդրումների ներգրավման վրա:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ծառայությունների մասով Հայաստանի պարտավորությունները համահունչ են:

9. ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԶՅ ՄՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1993թ. ապրիլի 22-ին Հայաստանի Հանրապետությունը անդամակցել է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությանը, և մինչ ԱՀԿ-ին անդամակցելը Հայաստանն իր օրենսդրական դաշտը համապատասխանեցրել է ԱՀԿ մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին համաձայնագրի դրույթներին, ինչպես նաև միացել է մտավոր սեփականության պաշտպանությանը վերաբերող միջազգային տարբեր կոնվենցիաներին՝

- ա) Բեռնի կոնվենցիա՝ հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների, գրական և գեղարվեստական երկերի պաշտպանության վերաբերյալ,
- բ) Փարիզյան կոնվենցիա՝ ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների, տնտեսական մրցակցության պաշտպանության (ներառյալ՝ անբարեխիղճ մրցակցության և չբացահայտված տեղեկատվության պահպանության) վերաբերյալ,
- գ) Ջոնի կոնվենցիա՝ կատարողների, հնչյունագրեր արտադրողների և հեռարձակող կազմակերպությունների պահպանության վերաբերյալ,
- դ) Ժնևյան կոնվենցիա՝ հնչյունագրեր արտադրողների շահեր իրենց հնչյունագրերը անօրինական արտադրությունից պահպանելու վերաբերյալ:

Մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության շրջանակներում Հայաստանի Հանրապետության հետանդամակցային միակ պարտավորությունն արդեն իսկ ընդունված քրեական օրենսգրքի առանձնացված մասի կիրառումն է:


ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻ

Ընդհանուր առմամբ պետք է ասել, որ Հայաստանը կատարել է իր վրա ԱՀԿ անդամակցության պայմանագրով դրված և Աշխատանքային խմբի զեկույցում նախանշված պարտավորությունները: Համեմատելիս դեպս համապատասխան իրավական ակտերն ընդունված են և լիարժեքորեն գործում են:

Մաքսային, հարկային ոլորտներում, լիցենզավորման, ստանդարտացման բնագավառներում համապատասխան օրենսդրական փոփոխություններ են կատարվել, ՍԲՍ, ԱՏԻ Պետական գնումների, ֆինանսական ծառայությունների և այլ ոլորտներում նոր ոլորտի առումով ԱՀԿ օրենսդրությանը չհակասող օրենքներն արդեն ընդունված են և գործում են: Կարելի է ասել, որ ֆորմալ տեսակետից Հայաստանը ճիշտ ժամկետներում իրականացրել է իր վրա դրված պայմանագրային պարտավորությունները ու իր գործելակերպով չի տարբերվում ԱՀԿ այլ անդամներից:

Այլ հարց է, թե արդյոք Հայաստանը իրականացնում է իր պարտավորությունները իրազեկման և թափանցիկության մասերով, սակայն այս խնդիրը դուրս է սույն հետազոտության շրջանակներից:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ



ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2009թ. հունվարի 1-ին գյուղատնտեսության ոլորտը Հայաստանում կմտնի հարկային դաշտ: Նույն պահին ուժի մեջ կմտնեն ԱԱՀ մասին օրենքում 2002թ. մտցված փոփոխությունները: Այս քայլով Հայաստանը փաստացիորեն լրիվ ծավալով իրականացրած կլինի ԱՀԿ-ի առջև իր ստանձնած պարտավորությունները և հաշվի առնելով հեռահաղորդակցության շուկայում վերջին տարիներին տեղի ունեցող կտրուկ փոփոխությունները (երկրորդ և հիմա արդեն երրորդ բջջային օպերատորի մուտքի և Արմենթելի՝ մենաշնորհից հրաժարվելը) կթևակոխի առևտրային զարգացման մի նոր փուլ, ուր արդեն տեղ չեն գտնի տարբեր արտոնություններ և բացառություններ:

Սակայն արդեն իսկ հիմա առկա են մի շարք խնդիրներ, որոնց լուծումը հրատապ է դառնալու հենց գալիք տարիների ընթացքում: Այսպես, ուշագրավ և անհանգստացուցիչ է այն հանգամանքը, որ Հայաստանի խոշոր հարկատուների առաջին շարքերում են ոչ թե արտահանողները, այլ մի քանի մենաշնորհային ներմուծող և հենց այս պատկերից էլ ելնելով երկրի հեռանկարը ԱՀԿ անդամակցության համատեքստում դեռևս հստակ չէ:

Ամեն պարագայում պետք է ասել, որ զուտ իրավական տեսանկյունից Հայաստանը գերազանց կատարողական ցուցադրեց իր ստանձնած պարտավորությունների իրականացման առումով: Արդեն իսկ մինչև անդամակցային փուլը համապատասխան օրենքները հիմնական ծավալով արդեն իսկ ընդունված էին և անդամակցությունից հետո Հայաստանին մնում էր մի շարք օրենսդրական փոփոխություններ իրականացնել, որն էլ նա հաջողությամբ կատարեց վերջին տարիների ընթացքում:

Ինչ վերաբերում է առկա թերություններին, ապա ինչպես և ակնկալվում էր հետազոտության սկզբում նրանք մեծամասամբ տեխնիկական բնույթի են և էական ազդեցություն չեն ունենում Հայաստանի պայմանագրային պարտավորությունների վրա: Ինչևիցե ՀՀ ԱՀԿ հարաբերությունների ինտենսիֆիկացիան պետք է նախևառաջ խարսխված լինի տեղեկատվության փոխանակման և թափանցիկության ապահովման վրա, ինչը իր հերթին նախատեսում է արդեն իսկ գոյություն ունեցող կառույցների ավելի արդյունավետ աշխատանք: Իհարկե այստեղ խնդիրն արդեն դուրս է գալիս իրավական տիրույթից և անցնում է վարչական դաշտ, բայց միևնույն ժամանակ կատարողականի վերահսկողության մեխանիզմների կատարելագործումը միմիայն կխրախուսի այս ընթացակարգերը և նոր խթաններ կհաղորդի այս համակարգում Հայաստանի ավելի արդյունավետ մասնակցությանը:

Խոսելով տեղ գտած թերացումների մասին, կարելի է ասել, որ դրանք մեծամասամբ տեխնիկական բնույթ են կրում և նշանակալի ոչ մի ազդեցություն չեն ունենում ՀՀ պարտավորությունների կատարման վրա: Թերևս արժանահիշատակ են մի քանի հանգամանքներ:

Նախևառաջ ասենք, որ պետք է

- ավելի հստակ սահմանել Հակազնազգման մասին օրենքի 8.1 կետը՝ այն համապատասխանեցնելով Համաձայնագրի 2.2 հոդվածին,
- ավելի լայն լիազորությունների (սեփական նախաձեռնության տալ) զնազգման հարցերով զբաղվող լիազոր մարմին

- ⊙ ճշգրտել Հակազնագցման մասին օրենքում և ԱՅԿ համապատասխան համաձայնագրում առկա հարցաթերթիկների պատասխանելու ժամկետները (օրենքի 44 հոդվածի և Համաձայնագրի 6.1.1)
- ⊙ հաշվի առնել այն հանգամանքը, որ Հակազնագցման մասին Համաձայնագրի 6.13 հոդվածով նախատեսված է փոքր ձեռնարկություններին համապատասխան օգնություն ցուցաբերել:
- ⊙ պահպանել ԱՏԽ համաձայնագրի լրացուցիչ դրույթները, որոնք վերաբերում են լրացուցիչ պարտավորություններին:

Ընդհանրապես պետք է ասել, որ քննարկված օրենքների մեծամասնության մեջ առկա է մեկ ընդհանուր թերություն. այն է, հատուկ տեխնիկական պահանջների իրականացման մեխանիզմների անհստակությունը: Օրինակ Պաշտպանական միջոցների մասին օրենքում հավելյալ մաքսի վերադարձման մեխանիզմը: Իհարկե մի կողմից նման մեխանիզմի բացակայությունը զգալի ազդեցություն չի թողնում համակարգի անխափան աշխատանքի վրա, սակայն մյուս կողմից խնդիրների ծագման դեպքում իր մեջ թաքնված ռիսկեր է պարունակում, որն էլ կարող է որոշակի անախորժ հետևանքների պատճառ դառնալ:

Իրագործման այսպիսի մեխանիզմների բացակայությունը կամ դրանց «լռելյալ» իրականացումը (չիրականացումը) հենց այն չնչին բացթողումն է, որն էլ խանգարում է մեր օրենքներին՝ լիովին համապատասխանել ԱՅԿ համաձայնագրերին: Իհարկե այսօր ԱՅԿ պատմության մեջ դեպքեր չեն գրանցվել, որ նման կարգի թերացումները լուրջ խնդիրների առաջացման պատճառ դառնան, սակայն սա այն ցանկալի մոդելն է, որին հասնելու համար Հայաստանից մեծ ջանք չի էլ պահանջվի:

Եվս մեկ ընթացակարգային թերացում կարելի է համարել թափանցիկության և բավարար հանրամատչելիության պակասը, որն էլ հանգեցնում է թե արտահանողների և, թե ներմուծողների իրազեկված չլինելուն, ինչն էլ իր հերթին անտեղի ռիսկեր ու խոչընդոտներ է ստեղծում առևտրային գործունեություն իրականացնելիս: Սույն բացթողումը շտկելու համար բավարար է կիրառել թե ԱՅԿ Համակարգում և, թե ՀՀ պարտավորությունների մեջ ամրագրված մեխանիզմները:



GLOBAL SPC
BUSINESS & LEGAL CONSULTING

Գլոբալ Էս-Փի-Սի, Մոսկովյան 24, #1, Երևան, ԶԶ 0002,
հեռ. (374 10) 52 08 51, Էլ-փոստ: info@globalspc.am,
Էլ. կայք: www.globalspc.am